

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ Д И С К У С С И И

ՀԱՅՏԵՐԻ ՈՋ ՀՆԳԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽՆԻՆԵՐԸ՝ ԽՈՒՐՐԻ ՈՒՐԱՐՏԱՅԻՆԵՐԸ
ԵՎ ՈՒՐԱՐՏՈՒ—ՀԱՅԱՍՏԱՆ ՊՐՈՒԼԵՄԸ

Գ. Ա. ՏԵՐԱՅՅԱՆ

Վերջին ժամանակներում նոր թափով արտահայտված կասկածներից անկախ կարելի է ասացուցված համարել, որ Հայկական լեոնաշխարհը վաղուց բնակեցնող խուրրի ուրարտացիները հայերի նախնիներն էն և կազմել են հայ ժողովրդի հիմքը:

Այս երևում է Հայկական լեոնաշխարհի բնակչության էթնիկական կազմի հինարևելյան (ուրարտական, արքադական, խեթական, խուրրիական) արձանագրությունների օգնությամբ բացահայտվող պատկերից, որի համաձայն այդ լեոնաշխարհի ղեկավար տարածությունները բնակեցված էին իրար ազդակից խուրրի-ուրարտական ցեղերով: Խուրրիական տառեր վկայված է Հայկական լեոնաշխարհի արևմտյան մասերում (որտեղ նա համագոյակցում էր հնդեվ-րոպացի հայ-արմենների հետ), Վանա լճից հարավ, Արևելյան Տիգրիսի հովտում (Խուրուշկիա), Ուրմիո լճի շրջապատում և հյուսիսում՝ Դիաուխի երկրում, ապագա Տայքում: Ուրարտացիները վկայված են Վանա լճից հյուսիս, արևելք և հարավ, առավելապես հարավ-արևելք մինչև Մուսասիր (Ռևանդուզի շրջան), ինչպես նաև հյուսիս-արևելքում՝ Արարատյան դաշտում¹:

Ուրարտուի անվան դեմ ձեռնարկած ոտնձգություններն ունեն կրկնակի նպատակ՝ ոչ միայն ասացուցել այդ անվան սնանկությունը, այլ նաև ժխտել նրա տակ հասկացվող երկրի կամ պետության գոյության փաստը: Պետք է նշել, որ արհեստականորեն այն տպավորություն է ստեղծվում, թե Ուրարտուն մի նորաթուխ տերմին է, արդյունք մեր ժամանակների, ամեն դեպքում՝ XII—XV դդ. գիտնականների եթե ոչ միտումների, ասպա գոնե նրանց մոտորումների:

Այնինչ քաջ հայտնի է, որ Ուրարտու անունը, Ուրուատրի, Ուրատրի և հենց Ուրարտու ձևերով ծանոթ էր մեր օրերից համապատասխանաբար 3300, 3000 և 2800 տարի առաջ: Առաջին անգամ Ուրուատրի ձևով հանդիպելով Ասորեստանի Սալմանասար I (մ. թ. ա. 1280—1261) և ապա Աշշուրբեկա (մ. թ. ա. 1076—1050) թագավորների արձանագրություններում, անունը շարունակում է հիշատակվել Ուրատրի ձևով նույն Ասորեստանի Ազադներարի II (մ. թ. ա. 911—890) թագավորի արձանագրություններում և ապա Ուրարտու ձևով՝ Աշշուրնազիրպալ II (մ. թ. ա. 883—859) և Սալմանասար III (մ. թ. ա. 860—825) թագավորներից սկսած մինչև Ասորեստանի վերջին թագավորների ժամանակաշրջանը²: Ուրարտու անունը, ճիշտ է, նույն ասորեստանյան աղբյուրների միջնորդությամբ, հանդիպում է և այլալեզու աղբյուրներում. բաբելական արձանագրություններում՝ Ուրաշտու, Հին կտակարանում՝ Սրարա և կամ էրիրաթ, Սեռլալ ծովի Քումուսի համայնքի տեքստերում՝ Ուրարատ ձևերով: Հիշատակվում է ուրարտացիների՝ ալարդիների անունը նաև մ. թ. ա. V դարի հույն պատմիչ Հերոդոտոսի մոտ:

¹ Г. А. Мелникшвили. Наирн—Урарту. Тбилиси, 1954, с. 70 и сл; его же. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 8—12.

² Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 43 и сл.

Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ աղբյուրները նույն տեղանքի օգնությամբ բնորոշում, բայց և տարբերակում են ցեղային միությունը (Ուրուարտի, Ուրարտի) երկրից և թագավորությունից (Ուրարտու, Ուրաշտու, Արարատ, Ուրարատ), սրանք էլ՝ էթնիկական պատկանելությունից (Արամու ուրարտացին՝ Արրամու ուրարտայա) կամ էթնիկական խմբից (ուրարտացիներ՝ ուրաշտայա, ալարոգներ)։

Ինքնին հասկանալի է, որ առաջին հերթին ասորեստանյան, ինչպես և մյուս աղբյուրներում հիշատակվող անունների հնությունը և վավերականությունը, որոնց գերակշռող մասը ժամանակակից է իրենց օբյեկտին, այդ անուններին հաղորդում է պատմական և օրինական բնույթ, անկախ այն հանդամանքից, թե ուրարտացիները իրենց և իրենց երկիրը ինչպես էին անվանում, որովհետև մեր օրերում էլ բազմաթիվ օրինակներ ունենք երկրների և ժողովուրդների, որոնց այլ ժողովուրդների կողմից տրված և ինքնանունից տարբերվող անվանումները վաղուց քաղաքացիության իրավունք են ստացել։ Ամենևին, ուրեմն, պատահական չէ և ոչ էլ քմահաճության արդյունք, որ ժամանակակից գիտությունը որդեգրեց ասորեստանցիների հիշատակած Ուրարտու անունը ոչ միայն Ուրարտուի ժառանգների երկրում՝ Հայաստանում, այլև Ռուսաստանում, Արևմտյան Նիդերլանդում, ԱՄՆ-ում և, ինչպես երևում է Տոկիոյում վերջերս հրատարակված ուրարտագիտական բիրլինգրաֆիայից, անգամ Ճապոնիայում։ Դի խոսքով բոլոր այն տեղերում, որտեղ զբաղվում են Հին Արևելքի պատմությամբ ու մշակությամբ։

Ուրարտու անունը վաղուց է ստացել քաղաքացիության իրավունք ժամանակակից գիտության մեջ և հանդիպում է տասնյակ և հարյուրավոր գրքերում ու հոդվածներում, թանգարանների ցուցադրություններում ու կատալոգներում։ Բացի դրանից հայտնի է, որ Ուրարտու անունը հաստատուն հետքեր է թողել Հայկական լեռնաշխարհում Արարատ լեռան, Ալարատ նահանգի, Օրտայացիների ցեղի (Անձիտի շրջանում) և Ալ-Արտան (Խուֆ-Սասունում) անունների մեջ³։ Այս նշանակում է, որ Ուրարտու անունից հրաժարվելու դեպքում մենք պետք է հրաժարվենք հայկական տեղագրության ու ցեղագրության մեջ հաստատուն տեղ գրաված վերոհիշյալ անուններից, մի հանգամանք, որն աներևակայելի է։ Սա ամենևին չի նշանակում, թե ընդունելի չեն նաև երկրի, տիրության մյուս անունները՝ նախ և առաջ Բիայնա, Բիայնիլի ինքնանվանումը կամ Վանի թագավորություն ձևը։

Սակայն կարևորը այս իրադրության մեջ մի այլ իրողություն է, որը զգուշորեն շրջանցվում է։

Ասել, որ Ուրարտու անունը ասորեստանցիներն են տվել երկրին՝ նշանակում է միայն ճշմարտության կեսն ասել։ Բանն այն է, որ այս անունը ասորեստանցիները ոչ թե հորինել են իրենց լեզվով, այլ Ուրարտու անվանը նրանք հանդիպել են հենց Հայկական լեռնաշխարհում։ Սա խիստ կարևոր հանգամանք է։ Ինչպես դեռ իր ժամանակին նկատել է Ն. Ադոնցը, Ուրարտու անունը իր բոլոր տարբերակներով ոչ մի կապ չունի սեմական, ասորեստանյան լեզուների հետ և չի ստուգաբանվում այդ լեզուների օգնությամբ։ Ընդհանրապես Ուրարտու անունը ունի միանգամայն տեղական արմատներ⁴։ Այդ, իմիջիայլուց, բխում է նաև ասորեստանյան արձանագրությունների բնութից։ Մուտք դործելով Հայկական լեռնաշխարհ, Ասորեստանի թագավորները իրենց արձանագրություններում թվարկում էին նվաճված երկրների ու բնակավայրերի,

³ J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien, 1930, S. 221—223;

Գր. Ղափանցյան. Ուրարտուի պատմություն. Երևան, 1940, էջ 134, 226։

⁴ Գր. Ղափանցյան. Նշվ. աշխ., էջ 12—13, 132—133։ Г. А. Мелникшвили. Наирн—Урарту, с. 20—22. Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 269։

ցեղերի ու ցեղային միությունների՝ տեղում լսած անունները, այդ թվում և Ուրուտտրին, Ուրատրին և Ուրարտուն։ Ինչպես երևում է նույն այդ արձանագրությունների տվյալներից, վերոհիշյալ անունները կրող երկիրը կամ ցեղային միությունը սկզբնապես փոքր է եղել, տեղագրված Վանա լճից հարավ-արևելք, Մեծ Զաք գետի շրջանում։ Այստեղից անունը տարածվել է դեպի հյուսիս՝ ընդգրկելով իր մեջ Վանա լճի ավազանը, ապա Հայկական լեռնաշխարհի մի մեծ մասը։

Որ Ուրարտու անունը տեղական ծագում ունի դա երևում է մի շարք փաստերից։ Այսպես, ուրարտական արձանագրություններում հանդիպում է ուրուրդի տերմինը՝ մարդկանց որոշ կատեգորիա բնորոշելու համար։ Հնարավոր է, որ ասորեստանցիները սկզբում հանդիպել են սոցիալական այս խմբին, որի ուրուրդի անունը աստիճանաբար վերածվել է Ուրարտուի, տարածվելով սկզբում ուրարտական ցեղերի, ապա Ուրարտական պետության վրա։ Մեղ ալեի հնարավոր է թվում այն բացատրությունը, ըստ որի Ուրարտու անունը ծագում է հաբեի երկրում, Կորճայքի (Իրաքյան Քուդստանի) լեռներում Ասորեստանի Աշուրնաշուրպալ II թագավորի (883—859) արձանագրության մեջ հիշատակվող Արարդի լեռան (այժմ՝ Զուդդի դաղ) անունից⁵։ Արարդին կարող է Արարդու ուղղական ձևից ծագել։ Ալեի քան հավանական է, որ Արարդի երկիրը, ուր, ըստ Մովսես Խորենացու, ժամանակավորապես հանգրվանում է Հայկը Բաբելոնից հեռանալուց հետո, հենց այս լեռան շրջապատն է կազմում։ Հավանաբար նախնական Ուրարտուն ձևավորվել է այս շրջանում, Մուսասիրի հռչակավոր կենտրոնից ոչ շատ հեռու և ապա տարածվել հյուսիսային ուղղությամբ։

Այժմ քննենք Ուրարտուի էթնիկական պատկանելության հարցը։

Ուրարտուի, նրա բնակչության էթնիկական պատկանելության չափանիշը այնուամենայնիվ մնում է լեզուն։ Այստեղից էլ ուրարտական սեպագիր արձանագրությունները հայերեն կարգավոր՝ կատարյալ անհաջող (բարեբախտաբար սակավթիվ) փորձերը։ Մորդմանի (XIX դար) անհաջողության մատնված օրինակը, ինչպես նաև արձանագրությունները վրացերեն կարդալու նույն ձևակապողին արժանացած փորձերը (Լենոքման, մասամբ Ն. Մառ) վկայում են, որ արձանագրությունները կարելի է կարդալ միայն այն լեզվով, որով նրանք գրված են, այսինքն՝ ուրարտերեն։

Չնայած ուրարտերենից հայերենի և, հավանաբար, հայերենից ուրարտերենի մեր որոշ թվով փոխառյալ բառերի գոյությունը, երկու լեզուների բերականական կառուցվածքի, բառապաշարի և լեզվային այլ հատկանիշների համեմատումը ակնհայտորեն մատնանշում է նրանց ոչ միայն տարբեր լեզուներ լինելը, այլև տարբեր լեզվաընտանիքների պատկանելը։ Բավական է հիշատակել էրզնուրդի բերականական ձևի գոյությունը ուրարտերենում, որն իսպառ բացակայում է հնդեվրոպական լեզուներում և հայերենում։ Այս կապակցությամբ պետք է նշել, որ իր հաստատումը չգտավ նաև ուրարտերենը հնդեվրոպական կամ հնդեվրոպական լեզու և կամ հնդեվրոպական լեզուներին ազդեցիկ լինելու մասին տեսակետը⁷։ Դրա փոխարեն նորանոր փաստեր են բերվում խուրիների հետ ուրարտերենի ունեցած ազդակցական մերձավորության մասին, որով Առաջավոր Ասիայի հնագույն լեզվախմբերից խուրի-ուրարտական տոհմին և ինքնուրույն լեզվախումբը երբորդ տեղն է գրավում հնդեվրոպականից ու սեմականից հետո⁸։

Եթե փաստերի ծանրության տակ ընդունվում է, որ ուրարտական արձանագրությունների լեզուն այնուամենայնիվ հայերեն չէ (երկու լեզուների միջև

⁵ Б. Б. Пиотровский. Указ. соч., с. 43 и сл.

⁶ Գ. Դ. Ղափանյան. նշվ. աշխ., էջ 22, 132—133; Г. А. Меликишвили. Наим.—Урарту, с. 21.

⁷ Г. Б. Джаукян. Урартский и индоевропейские языки. Ереван, 1963.

⁸ И. М. Дьяконов. Языки древней Передней Азии. М., 1967, с. 113 и сл.

դրույթներն ունեցող արմատական տարբերությունները միանգամայն ակնհայտ են), ասլա կայծակնային արագություններ հարմարվելով ստեղծված իրադրություններ և առաջ է քաշվում մի նոր տեսակետ, որի էությունը հետևյալն է: Ուրարտուն այնուամենայնիվ Հայաստան է, հայկական բնակչությամբ, իսկ նրա տարածքում գտնվող ուրարտական սեպագիր արձանագրությունները դրված են ալու ինակությունը անհասկանալի մի լեզվով, որը պետական-պաշտոնական լեզվի դեր է կատարել: Ռ. Ա. Իշխանյանի կողմից առաջ քաշված ալու տեսակետի շարադրման շարունակության մեջ ասվում է, որ մ. թ. ա. IX—VII դդ. այդ հայկական թագավորության բնակիչները, որոնք հայեր էին, չունենալով իրենց գիրը, օգտվել են նորիստորիներեն լեզվից (որով իբր դրված են այդ թագավորության արձանագրությունները) և միջազգային սեպագրերից, այնպես, ինչպես ավելի ուշ օգտվել են արամեերենից ու հունարենից⁹:

Բայց ամեն ինչից երևում է, որ արձանագրությունների լեզուն, ինչպես էլ այն անվանելու լինենք, նորիստորիներեն, ուրարտերեն կամ այլ կերպ, այդ երկրի բնակիչների լեզուն է, կենդանի և խոսակցական: Այնպես որ արձանագրությունների լեզվի նորիստորիական վարկածը, լեզու, որ իբր սեփական գիրը չունեցող պետության կողմից որպես պաշտոնական լեզու պարտադրվել է իր հալ բնակչությանը, մերժելի է դառնում:

Ընդհակառակը, ակնհայտ է, որ արձանագրությունների լեզուն ուրարտերենն է, հարազատ ոչ միայն ուրարտական պետության վերնախավի, այլ նաև այդ պետության ուրարտական ծագում ունեցող բնակչության համար և որ այն խոսակցական լեզու է եղել: Մասնագետները հաստատել են ուրարտերենի երկու բարբառների (Վանի և Մուսասիրի¹⁰, ուրոնց գուցե հնարավոր լինի ավելացնել և Երրորդը՝ Արարատյան դաշտի բարբառը) դրույթյան փաստը, բարբառներ, որոնք բնականաբար ժամանակակից են ուրարտական թագավորությանը և նրա արձանագրություններին: Այս հնգամանքը անշուշտ վկայում է կենդանի լեզվի գոյության և նրա օգտագործման հնարավորության մասին:

Նույն բանի մասին են վկայում նաև կավե տախտակների վրա դրոշմված սեպագիր նամակ-արձանագրությունները: Նրանցում արժանիքավոր հարցերը շատ դեպքում հասառակ են, իսկ նրանց բնույթը այնքան կենցաղային ու ամենօրյա (սեղեկություն հացթուխի կամ խոհարարի՝ պալատում աշխատող պատերը ամուսնացնելու մասին, Տատա ստրուկի կողմից մի աղջկա առևանգման կապակցությամբ հրաման ավագ հովվին՝ այդ աղջկան գտնելու և տիրոջը վերադարձնելու մասին և այլն)¹¹, որ հնարավոր է պատկերացնել, թե նամակների լեզուն ժողովրդի լեզուն չէ, այլ պետության կողմից արհեստականորեն պատվաստված ինչ-որ մի անհասկանալի լեզու: Ուրարտական արձանագրությունների համեմատաբար մեծ թիվը, նրանց տեղաբաշխումը ամբողջ տերությունում մեկ, նրանց բազմաբնույթ բովանդակությունը (ռազմական, նվաճողական, շինարարական, պաշտամունքային), էլ չենք խոսում արձանագրությունների եզրափակիչ հատվածի՝ նրանց պոտենցիալ եղծողներին, ավերողներին, վնասողներին ու փչացնողներին ուղղված նախազգուշացումներին ու անեծքների մասին, անկասկած վկայում են, որ ալու արձանագրությունները հասցեագրված էին կոնկրետ ընթերցողին, մանավանդ որ, ինչպես զնալով ավելի պարզ է դառնում, գրագիրությունը բավականին տարածված է եղել չին Արեւելքում¹², այդ թվում պետք է կարծել նաև Ուրարտում:

Վերջապես հայտնի է, որ Ուրարտում առաջին արձանագրությունները եղել են ասսուրերեն, իսկ հետո փոխարինվել են ուրարտական արձանագրու-

9 Ռ. Իշխանյան. Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործումները և հայերի ծագման ու նազան պատմության հարցերը. «Բանիբեր երևանի համալսարանի», 1979, № 2:

10 Գ. Ղափանցյան. Նշվ. աշխ., էջ 96: Դ. Ա. Мелнишвили. Урартские клинообразные надписи, с. 32, 82 и сл.

11 И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.—Л., 1963, с. 33—34.

12 М. А. Дандамаев. Вавилонские письма. М., 1983.

խյուններով, որոնց և լեզուն, և անգամ նույն սեպագրի վրա հենված գրությունը տարբեր է նախորդից: Եթե այդ ուրարտերենը կամ նորխուրթիերենը նույնպես անհասկանալի էր ժողովրդին, ապա էլ ի՞նչ կարիք կար հրաժարվելու նույնքան անհասկանալի աստուերենից, որը նույն հաջողությամբ կարող էր տեղական պաշտոնական լեզվի դեռ խաղալ: Սակայն աստուրական արձանագրություններին փոխարինող լեզուն ոչ միայն պետական լեզուն էր, այլ նաև պետության կազմի մեջ մտնող էթնիկական ոռոշակի զանգվածների լեզուն, նրանց հասկանալի և օգտագործելի:

Այսպիսով տեսնում ենք, որ արձանագրությունների լեզուն ուրարտերենն էր, այն հասկանալի է եղել ժողովրդին և սպասարկել է նրան: Այդ կապակցությամբ պետք է նշել նաև, որ հաջող չէ Հայաստանում ավելի ուշ կիրառություն գտած հունարենի ու արամեերենի օրինակը, ապացուցելու համար, թե սեպագիր արձանագրությունների լեզուն տարբեր է եղել ժողովրդի լեզվից: Համեմատական պատմական զուգահեռների (անայոգիաների) մեթոդը պահանջում է մեծ զգուշավորություն և բանիմացություն: Ուրարտական արձանագրությունների օտարամուտ բնույթը հաստատելու համար հունարենի և արամեերենի օրինակը տեղին չէ: Հունարենը և արամեերենը ունեցել են միջազգային աննախադեպ տարածում, որը չի կարելի ասել ուրարտական արձանագրությունների լեզվի մասին, ինչպես էլ մենք այն անվանելու լինենք: Մենք ոչ մի օրինակ չունենք, թե այդ լեզվով օգտվել են ուրիշ ժողովուրդներ կամ պետություններ, սուտի և այդ արձանագրությունները հանդիսյում են միայն Ուրարտական պետության սահմաններում: Եթե նրանք հանդիպում են նրա սահմաններից դուրս (օրինակ Հյուսիսային Իրանի տարածքում), ապա անմիջականորեն կասվում են ուրարտական թագավորների ռազմական նվաճողական քաղաքականության հետ: Այնինչ արամեերենը, որը արդեն նորաստեղծության պետությունում կայուն դիրքեր էր գրավել, Աքեմենյանների օրոք դառնում է տերության պետական պաշտոնական լեզու և որպես այդպիսին լայնածավալ տարածում գտնում: Արամեական արձանագրությունները վկայված են Հնդկաստանից մինչև Փոքր Ասիա, Եգիպտոսից մինչև Հայաստան և Անդրկովկաս, ընդգրկելով Իրանը, Միջագետքը և Ասորիքը: Ամբողջ այդ տարածքի համար արամեերենը եղել է *lingua franca*, որից օգտվել են արամեերենի հետ ոչ մի կապ չունեցող ժողովուրդներ ու ցեղեր: Նույնը կարելի է ասել հունարենի մասին, որը Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Առաջավոր Ասիայում փոխարինելու եկավ արամեերենին (թեև ոչ լիովին): Մայր արևմուտքից՝ Իսպանիայից ու Գալլիայից մինչև Ասիայի խորքերը, իր մեջ առնելով մեծածեծության տարածքը և Աֆրիկայի հյուսիսը, հունարենը կատարել է իր մշակութային առաքելությունը:

Արամեերենի ու հունարենի բնույթը, նրանց կատաղած դերը Առաջավոր Ասիայում համեմատության ոչ մի եզր չի գտնում այսպես կոչված նորխուրթիերական, ըստ էության ուրարտական, արձանագրություններին վերագրված ուրահատկությունների հետ: Ինչպես էլ անվանելու լինենք այդ արձանագրությունների լեզուն՝ ուրարտերեն, բիայներեն թե նորխուրթիերեն, այն անուշաման սպասարկել է ոչ միայն պետական պաշտոնական ոլորտները, այլ նաև նույն լեզվով խոսող մարդկանց բավականին ստվար զանգվածներ: Այսպիսով սլարդ է, որ արձանագրությունները արտահայտում են ուրարտական պետության մեջ իշխող էթնիկական տարրի՝ ուրարտացիների կամ բիայնիցիների լեզուն:

Այժմ մի քանի խոսք ուրարտացիների և Հայկական լեռնաշխարհը բնակեցնող այլ ցեղերի մասին ետուրարտական ժամանակաշրջանում: Սկզբնաղբյուրների սակավաթիվ, բայց հույժ կարևոր տվյալները թույլ են տալիս եզրվածել այդ ցեղերի՝ հայերին անդառնալիորեն ձուլվելու պատկերը: Վերարտագրելով աքեմենյան տերության սատրապությունների ցուցակը, հույն պատմիչ Հերոդոտոսը նշում է, որ Հայաստանի հյուսիս-արևելյան, արևելյան և հարավ-արևելյան հատվածներն ընդգրկող 18-րդ սատրապությունը բնակեց-

ված էր սասպերներով, ալարոզներով ու մատիեններով: Ս. թ. ա. VI—V դդ. վերաբերող այս իրավիճակը հետագա դարերում ատիճանաբար փոխվում է: Հայկական էթնիկական դանդաղածների ճնշման տակ սասպերները տրոհվում են երկու մասի՝ մ. թ. ա. V—IV դդ. սահմանագլխին Քսենոփոնի կողմից Հայաստանի հյուսիսում հիշատակված հեսպերիտների և Կուր գետի այն կողմի արևելավրացական ցեղերի՝ իբերների հիմքում ընկած սասպերների միջև: Հեսպերիտները, ընդգրկվելով «Արևմտյան Հայաստան» վաղապես միավորի կազմի մեջ, աստիճանաբար ձուլվում են՝ թողնելով իրենց անունը Հայաստանի Սպեր գավառի մեջ, որի վաղագույն՝ մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսին վերաբերող հիշատակությանը կարելի է հանդիպել Ստրաբոնի մոտ: Նույն ճակատագրին արժանացան ստորապուլյան հարավը զբաղեցնող մատիենների խուրիական ցեղերը՝ իրենց անունը թողնելով Ուրմիո լճի Մանտիանա անվան մեջ:

Ինչ վերաբերում է ուրարտացի ալարոզներին¹³, որոնք գրավում էին սատրապության միջին մասը (պետք է կառթել՝ Արարատյան դաշտը և նրա շրջապատը), ապա մ. թ. ա. IV դարում, Երվանդյան երկրորդ թագավորության կազմավորման օրերին, նրանք, արդեն վաղուց բռնած լինելով հայացման ուղին, այդ թագավորության օրգանական մասը կաղմեցին:

Ուրարտացիների հայացման մի ղեկավար անուղղակիորեն մեղ են հասցրել Բեհիստունյան արձանագրությունները: Այդ արձանագրությունների տվյալները համաձայն Դարեհի դեմ ապստամբություն բարձրացրած Բաբելոնիայում իրեն բաբելոնական զահի թեկնածու էր հայտարարել արմեն Արախան, Հայդիտայի որդին: Երկու (հոր և որդու) անունների ստուգաբանությունը օգնում է ճիշտ հասկանալ հին Հայաստանի էթնիկական պատմության կարևոր մի զրկա՝ կապված Հայաստանում ուրարտական տարրի ճակատագրի հետ: Այսօր ոչ ոքի մոտ կասկած չի հարուցում այն հարցը, որ արմեն Արախայի հոր անունը ուրարտական է («Խալդին մեծ է, Խալդի-տեալ»)՝¹⁴, դեռ ավելին, ինքը Հայդիտան ուրարտացի է, Ուրարտական տեղությունը անկումը տեսած և Հայկական թագավորության օրերում իր գոյությունը պահպանած ուրարտական տոհմից: Սակայն էթնիկական պոռոցները, որոնք անկասելիորեն աշխատում էին Հայկական լեռնաշխարհի էթնիկական ղեկավար տարրի՝ հայ-արմենների օգտին, այժմ իրենց դրոշմը դրեցին ուրարտական այդ տոհմի ճակատագրի վրա: Արդյունքը՝ Հալգիտա ուրարտացու արմեն որդին: Ծիշտ են այն ուսումնասիրողները, որոնք ընդգծում են էթնիկական պատմության այս զրկադրական փառաբանությունը արձանագրության նշանակությունը¹⁵: Հալգիտայի որդին հայ է ոչ միայն արձանագրության տվյալների համաձայն, այլ նաև իր անվամբ, որի հիմքը՝ Ար-ը, հայկական-փոքրասիական է¹⁶: Քանի որ Արախան գործում էր Բաբելոնիայում, ապա նրա հայկական անունը կարող էր որոշ չափով հարմարվել նաև տեղի անունների ձևերին:

¹³ Ուրարտու—ալարոզներ անցումը բացատրվում է բաբելոնի առանձնահատկություններով, որոնց համաձայն աստուրների Եր-ն բաբելոնում դառնում է շտ, որով աստուրներն Ուրարտուն դառնում է Ուրաշտու: և կարդացվում է Ուրաշտ կամ Օրաշա, որը բաղաձայնների դրափոխման ենթարկվելու ելանակով (Ուրարտ) դառնում է ալարոզ ցեղանվան հիմքը: Այս փոխակերպությունները անշուշտ տեղի են ունեցել ոչ թե տեղական հողի վրա, այլ ուրարտերենին օտար մի միջավայրում (J. Markwart. Südarmanien..., S. 222, Anm. 3. Գր. Ղափանցյան. նշվ. աշխ., էջ 134, 226; Г. А. Мелникшвили. Аарп—Урарту, с. 21—22; И. М. Дьяконов. Языки древней Передней Азии, с. 316, прим. 7).

¹⁴ И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 235. прим. 116; M. Mayrhofer. Die altiranischen Namen (Iranisches Personennamenbuch, II). Wien, 1979, S. 14—15, 21—22.

¹⁵ Գ. Ա. Սարգսյան. Հիմնադրուկ տեսություններ Ուրարտուի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 61:

¹⁶ Ն. Ա. Դոնց. նշվ. աշխ., էջ 373—376:

Այսպիսով, լրիվ անսպասելիորեն արձանագրությունը մեզ է փոխանցել մ. թ. ա. 521 թ. թվագրվող այն պահը, երբ ուրարտացի—հայ անցումը, մի ընտանիքի կամ տոհմի օրինակով, իրականություն էր դարձել:

Հայկական թագավորության և ապա սատրապության պայմաններում ուրարտացիների գոյության և նրանց դերի մասին անուղղակիորեն կարող են վկայել հնագիտական նյութերը: Ուրարտական և հայկական ժամանակաշրջանների մետաղադրոծության որոշ ճյուղերի և խեցեգործության մեջ երբեմն նկատվող ապշեցուցիչ նմանությունը հնարավոր է բացատրել նաև այն հանգամանքով, որ ուրարտական մետաղագործական և խեցեգործական արհեստանոցները շին դարձրեցին իրենց գործունեությունը հայկական ժամանակաշրջանում, գոնե սկզբում, և որ այդ արհեստանոցներում աշխատող վարպետները լիթնիկապես ուրարտացիներ էին, որոնք շարունակում էին արտադրել նույն մետաղագործական ու խեցեգործական տեսակներն՝ հարմարեցնելով այն նոր ժամանակների պահանջներին¹⁷: Սակայն արհեստավորական այս տարրն էլ, որի գոյության մասին կարող են վկայել վաղ հայկական ժամանակաշրջանի նյութական արտադրանքի նմուշները, նույն ճակատագրին արժանացավ, ինչ որ սոցիալական մյուս խմբերը՝ նրանք բոլորը հայացան:

Նման հակառակ հանվանե հիշատակված օրինակներ ևս հայտնի են: Մեկ օրինակը կապված է խալդայ-խալիբների հետ: Հայաստանի հյուսիս-արևմուտքյան լեռներում հանդիպող այս ցեղախմբի պատմությունը՝ հատկապես հայկական քաղաքական կազմավորումների և, վերջին հաշվով, հայկական էթնիկական տարրի հետ նրա ունեցած փոխհարաբերությունների տեսանկյունից, բավականին լավ ուրվագծվում է: Արևմտաքաղթելական այս օտարմատենց ցեղի պատմությունը սկիզբ է առնում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Ռուսո II-ը նվաճում է խալդայ-խալիբների խալիտու երկիրը:

Ուրարտուների անկման օրերին հավանաբար անկախանալով, նրանք նորից են հպատակեցվում, այս անգամ մ. թ. ա. VI դարի հայկական թագավորության կողմից: Հպատակեցման այդ ակտը Քսենոփոն պատմիչը վերագրում է կյուրոսին, բայց շատ ավելի հավանական է, որ դա Նովանդ Սակավակաց և Տիգրան Նրվանդյան թագավորների գործն է, մանավանդ, որ հնագույն մի վկայության համաձայն, որը պատկանում է հույն պատմիչ Հեկատայոս Միլետացուն, հայերը խալիբների անմիջական հարևաններն էին հարավից: Հաջորդ տեղեկությունը վերաբերում է սատրապական ժամանակաշրջանին, որից երևում է, որ խալիբ-խալդայները ինչ-որ կախման մեջ էին «Արևմտյան Հայաստան» վարչական միավորից: Հույն աշխարհագիր Ստրաբոնի մ. թ. ա. II դարի սկզբին վերաբերող մի վկայությունից երևում է, որ խալիբները, կամ գոնե նրանց մի մասը, Փոքր Հայքի կազմի մեջ էին մտնում: Քաղաքական հպատակեցման այս քայլերը ուղեկցվում էին էթնիկական ձուլման պրոցեսով: Դրա փայլուն ապացույցը արմենոխալիբներ անվանումն է, որ նրանց իսպառ կլանման նախօրեին կիրառում է մ. թ. I դարի հեղինակ Պլինիոս Ավագը (Naturalis Historia, VI, 11—12, 29): Խոսելով այս ցեղերի մասին, պատմիչը անուղղակիորեն ընդգծում է հայ-խալիբական քաղաքական և էթնիկական փոխհարաբերությունների այս կարևոր դրվագը: Վերջնական եզրափակիչ քայլը համընկավ խալդայ-խալիբների կամ նրանց մի ստվար մասի լիակատար ձուլման իրողության հետ, որից հետո Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում պահպանվեցին միայն այդ ցեղախմբերի երբեմնի գոյությունը հավաստող տեղանունները:

Մյուս օրինակը կապված է մարդերի իրանական ցեղի նույնատիպ հակատագրի հետ: Հայաստանի հարավում դեռևս մ. թ. ա. V դարի վերջին վկայված այս ցեղը (Քսենոփոն) շարունակում է իր գոյությունը սլահավանել և հետագա դարերում (Ստրաբոն, Պլուտարքոս, Տակիտոս), բայց ահա նույն Պլին-

¹⁷ Գ. Ա. Տիրացյան. Ուրարտու և Հայաստան (նյութական մշակութային ժառանգորդություն. հարցի շուրջը). — «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1, էջ 58—59:

Իրիս Ավագի մոտ վկայված մի աղճատված յեղանուն՝ Ն. Աղոնցի կողմից փայլուն կերպով վերականգնված որպես արմենոմարդեր, որը համոզեցուցիչ ուղենիշ է մարդերի հայացման ճանապարհին¹⁸:

Հին հայկական պետությունը ժառանգեց ոչ միայն Ուրարտուի տարածքը, այլ նաև քաղաքական այն հիմնական խնդիրները, որոնք կապված էին նրա դոլոթյան հետ Հայկական լեռնաշխարհում: Դրանցից երկուսն ամենակարևորներն էին. մեկը լեռնաշխարհի միավորումն էր իր բնական սահմաններում, մյուսը՝ հատվածից եկող օտարերկրյա սպառնալիքին դիմադրավելը: Ուրարտուի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա հաջող ձևով կատարեց այդ խնդիրները: Հասնելով արևմուտքում Եփրատ, արևելքում Կուր գետերին, հյուսիսում Պոնտական, հարավում Մասիոսի ու Կորդվաց լեռներին, Ուրարտուն փաստորեն առաջինն իրագործեց Հայկական լեռնաշխարհի միավորումը, համառ պայքարում կատարեց նաև իր մյուս առաքելությունը՝ փակելով Հայկական լեռնաշխարհի ճանապարհը հարավից եկող սեմական վտանգի առաջ¹⁹:

Երվանդունիների հայկական պետությունը, Ուրարտուի լիիրավ ժառանգը դառնալով, պատմական արդեն նոր իրավիճակում կանգնեց նույն խնդիրների առաջ: Մ. թ. ա. VI դարի սկզբին Ուրարտուին փոխարինելու եկած հայկական պետությունը, ինչպես երևում է քիչ ավելի ուշ, արեմենյան ժամանակաշրջանի տվյալներից, դարձավ փաստորեն Ուրարտուի իրավական ժառանգը, ամփոփվելով նրա քաղաքական սահմաններում և նրանցից էլ դուրս²⁰: Միևնույն ժամանակ նա փորձեց դիմադրել հարավ-արևելքից ու հարավից եկող նոր իրանական վտանգին: Եթե չլինեք այդ փորձը, հայ ժողովուրդը իսպառ կուլ կգնար իրանականությունը:

Ժառանգականությունը իրեն դրսևորեց ոչ միայն քաղաքական այս հիմնական, այլև մասնավոր խնդիրներում: Բավական է հիշել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջանների, այդ թվում և Արարատյան դաշտի յուրացման պատմությունը նախ ուրարտական պետության և ապա հայկական պետության կողմից, որպեսզի նշվի նրանց զարմանալի նմանությունը, կամ երկու պետությունների համանման վերաբերմունքը հյուսիս-արևմուտքում ապրող խաղաչների ցեղախմբի նկատմամբ՝ կապված խաղաչների խալիտու-խալդիք երկիրը նվաճելու ուղղությամբ Ռուսա II-ի և Երվանդ Սակավակյացի (համապատասխանաբար մ. թ. ա. VII և VI դդ.) կատարած փորձերի հետ:

Միշտ չէ, որ տեղագրական տվյալների փոխանցումը կամ հարատևությունը ազդակցական որևէ կապի մասին վկայող փաստ է, բայց ուրարտահայկական առնչությունները տեղանունների հարցում այնքան առատ են ու պերճախոս, որ մատնանշում են Հայաստանը Ուրարտուից օրգանապես բխելու մասին²¹:

Ժառանգականության երևույթը կարելի է տեսնել նաև մի շարք այլ բնագավառներում:

2. Աճառյանի աշխատանքներից, հատկապես «Արմատական բառարանի» հրատարակումից հետո պարզ դարձավ, որ հայերենի մեջ առկա է լեզվական մի ստվար շերտ, որը չի ստուգաբանվում: Լեզվաբանների կարծիքով այն ամենայն հավանականությամբ Հայկական լեռնաշխարհի տեղական, նախ և առաջ խուրրի-ուրարտական ցեղախմբերի լեզուների ներդրումն է հայերենի մեջ: Այս ներդրումը բացահայտելու ուղղությամբ կատարված է և շարունակվում է կատարվել որոշակի դրական աշխատանք և թեպետ խուրրիերենի և ուրարտերեն-

18 Н. Г. Адонц. Армения в эпоху Юстиниана. С.-Петербург, 1908, с. 418.

19 Ն. Աղոնց. Հայաստանի պատմություն, էջ 284:

20 Գ. Ա. Տիրացյան. Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ.).—«Պատմաբանասիրական հանդես», 1980, № 4, էջ 84 և հտ.:

21 Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985.

նի մեղ հայտնի բառապաշարը դեռ սահմանափակ է, այդ աշխատանքի արդյունքները հուսադրող են։ Նրանք ամփոփած են Գ. Ղափանցյանի հայոց լեզվի պատմությունը նվիրված գրքի «Հայերենի աղերսը խուրրի և ուրարտական լեզուների հետ» գլխում, բայց վերջին տարիներին այդ աղերսների թիվը աճել է։ Կարելի է խոսել հայերենի բաղաձայնի հաստատված և հատուկ անունների, բայական ձևերի, քերականական տարրերի մասին, որոնց խուրրիական և ուրարտական ծագումը կասկածից վեր է։ Նույնը կարելի է ասել հայերենի հնչյունաբանական առանձնահատկությունների մասին, որոնք գրավի չափով փոփոխվել են Հայկական լեռնաշխարհի տեղական լեզուների և առաջին հերթին՝ ուրարտերենի հնչյունային համակարգի ազդեցության տակ։

Խուրրի-ուրարտական, դեռևս մինչև վերջ չբացահայտված, ենթաշերտի առկայությունը հայերենի մեջ հայոց լեզվի և հայ ժողովրդի կազմավորման գործում տեղական ցեղերի մասնակցության և ուրարտա-հայկական ու խուրրի-հայկական ժառանգական սերտ կապերի խոստովանություն է։

Ուրարտական և հին հայկական հուշարձանների եռանդուն պեղումները այժմ թույլ են տալիս առաջ քաշել նաև նյութական մշակույթի և հարակից երևույթների հաջորդակցության հարցը։ Այն դարձել է հատուկ ուսումնասիրման առարկա, որտեղ բաղաձայնի բնագավառների օրինակով (բաղաբաշխություն, ճարտարապետություն, շինարարական տեխնիկա, խեցեգործություն, մետաղագործություն, թաղման ձևեր և այլն) հնարավոր է բացահայտել ուրարտական ներդրումը հին հայկական մշակույթի ձևավորման գործում²²։ Այս տվյալների լույսի տակ կարելի է խոսել ոչ թե ուրարտական մշակույթի ազդեցության մասին հին հայկականի վրա, այլ հայկական մշակույթի մեջ ուրարտական մշակութային երևույթների օրգանապես ձուլվելու մասին։

Գայով կոոնի և հավատալիքների հարցերին, դուցե և պետք էր համաձայնել Գ. Ղափանցյանի հետ այն բանում, որ ուրարտական պանթեոնը, շուրջ 60 աստվածությունների անուններով, ոչ մի ազդեցություն չի թողել հայկական պանթեոնի վրա, եթե այս ուղղությամբ տարվող աշխատանքները մասամբ հակառակը չապացուցեն։ Ուշագրություն դառնենք հենց Գ. Ղափանցյանի աշխատություններում հանդիպող ուրարտա-հայկական կոոնական առնչություններ հավաստող տվյալների վրա։

Այսպես՝ Նրեմիա Մեղրեցու բառարանում, որը Գ. Ղափանցյանի կարծիքով նաև ուրարտական բառեր է պարունակում, հանդիպում է մեղարդ բառը, որը թարգմանվում է լուսին։ Նրա կարծիքով՝ մեղարդը ծագում է սեղարդ ձևից, երկաթագիր Ս և Մ տառերի շփոթության հետևանքով։ Մյուս կողմից, Մհերի դուռն արձանագրությունում հանդիպում է խուրրի-ուրարտական աշխարհում տարածում գտած Սեղարդի կամ Շեղարդի աստվածությունը լուսին, աստղ նշանակությամբ, որով նա համահնչյուն է հայկական Սեղարդին, որի ուրարտական ծագումը անառարկելի է դառնում²³։

Մի ուրիշ խիստ հետաքրքրական ուրարտա-հայկական պաշտամունքային աղերսի վրա, փայլուն կոհսմամբ, մատնացույց է արել Ի. Դյակոնովը²⁴։ Ըստ նրա կարծիքի՝ խալդի գլխավոր աստծու պաշտամունքը Ուրարտական պետության անկումից հետո չի անհետացել, այլ ենթարկվել է սինկրետիզացիայի, համադրման։ «Խալդիի դուռ» պաշտամունքային արտահայտությունը, որը հանդիպում է Մենուա թագավորի Վանա ժայռի Մհերի դուռն արձանագրությունում, հայերի գիտակցության մեջ վեոթվեց «Մհերի դուռ» հասկացության։ Սա նշանակում է, որ ետուրարտական, հայկական ժամանակաշրջանում

²² Գ. Ա. Տիրացյան. Ուրարտու և Հայաստան. — «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1։

²³ Գ. Ա. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն (հին շրջան). Երևան, 1961, էջ 140։ Այս փաստի վրա մեր ուշագրությունը հրավիրեց Ս. Գ. Հմայակյանը։

²⁴ И. М. Дьяконов. К вопросу о символе Халди.— Древний Восток, IV. Ереван, 1983, с. 191—192.

ևսալդին նույնացվել է Միթրա-Միհր աստծու հետ և նրանց պաշտամունքները միաձուլվել են: Միհրը իր նախորդ ևսալդիի նման տոն օրերին զուրս էր գալիս ժայռի մեջ փորված սրբազան դռնից:

Վերջապես, ինչը կառող է ավելի լավ պատկերացում տալ ուրարտահայկական պաշտամունքային առնչությունների մասին, քան այն հանգամանքը, որ հայերեն աստված բառը մուտք է գործել ուրարտերենից կամ ուրարտերենի միջնորդությամբ: Վերընթերցելով Արգիշտի I-ի խորխորյան արձանագրության՝ դեպի էրիախի երկիրը կատարած արշավանքին նվիրված հատվածը, Գ. Մելիքիշվիլին այնտեղ կարդաց աստիուծի անունը՝ կուռք կամ աստված նշանակությամբ²⁵:

Մի քանի խոսք մարդաբանական աղբյուրի մասին: Դժբախտաբար մարդաբանական ուրարտական նյութը այնքան էլ հարուստ չէ, որպեսզի այն համեմատության մեջ դրվի հայերի մարդաբանական տիպի հետ, բայց եղածը, ինչպես նաև արվեստի գործերում և հատկապես Ասորեստանի Սալմանասար I-ի այսպես կոչված Բալավատյան դռների բարձրաքանդակների վրա պատկերված ուրարտական էթնիկական տիպը անկասկած հարում է առաջավորասիրական հնագույն ժողովուրդների կամ ցեղերի մարդաբանական կերպարին և այս տեսակետից կարող է նախորդը համարվել արմենոիդ տիպի, որին պատկանում են ժամանակակից հայերը: Մի կողմից խուրրիների և ուրարտացիների, մյուս կողմից հայերի մարդաբանական և գանգաբանական դուզահեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս և ցույց կտան, որ հայերն իրենց մարդաբանական հիմնական հատկանիշները ժառանգել են ուրարտացիներից և խուրրիներից:

Այժմ մի քանի խոսք Ուրարտու—Հայաստան քաղաքական անցման հետ կապված էթնիկական փոփոխությունների մասին, որոնց հատկապես ակունքներն եղավ Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. VII—VI դդ. սահմանագլխին: Սկզբնաղբյուրների՝ խեթական, ասորեստանյան, ուրարտական, հունական և հայկական, տվյալների համեմատական ուսումնասիրությունից կարելի է գալ այն եզրակացություն, որ Հայաստանի արևմտյան շրջանները՝ Փոքր և Բարձր Հայքը, Մոփրը, Աղձնիքը, հնուց ի վեր բնակեցված են եղել ոչ միայն խուրրիալեզու բնակչությամբ, այլ նաև հայերի հնդեվրոպական նախնիներով՝ հայասներով և արմեններով: Ճիշտ է, Հայկական լեռնաշխարհի այս մեծ հատվածը հիմնականում մտել է ուրարտական պետության կազմի մեջ, ինչպես օրինակ՝ Բարձր Հայքը, Մոփրը, ժամանակ առ ժամանակ Աղձնիքը, բայց էթնիկապես այն աստիճանաբար յուրացվեց հնդեվրոպական հայ-արմենների կողմից: Յուրացման այս պրոցեսը իր քաղաքական արտահայտությունը գտավ սկզբում Փոքր և Մեծ Հայքում՝ Հայաստան-Ազգի իշխանությունում, իսկ ապա Աղձնիքում՝ Արմեն-Շոռպրիա իշխանությունում:

Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VI դարի սկզբին հայ-արմենական ցեղերի հանդես գալու մասին ակադ. Հ. Մանանդյանի աշխատություններում տեղ գտած տեսակետը ուրմատապես վերանայվեց Գր. Ղափանցյանի և Բ. Պիոտրովսկու հիմնարար աշխատություններում, որոնց համաձայն մ. թ. ա. XIV դարից Հայաստանի հյուսիս-արևմուտքում վկայված է Հայաստան-Աղզին²⁶, իսկ մ. թ. ա. VIII դարից Հայաստանի հարավ-արևմուտքում՝ Արմեն²⁷: Խոշոր հեղաշրջում ապրած հայերի հնդեվրոպական նախնիների այս պրոբլեմում կարևոր նոր առաջընթաց կատարվեց Ս. Երեմյանի և Գ. Ջահուկյանի ուսումնասիրություններում, որոնցում մի կողմից Արմենի պատմությունը հնացվեց

²⁵ Г. А. Мелликишвили. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I.—Переднеазнатский сборник. М., 1979, с. 174.

²⁶ Гр. К а п а н ц я н. Хайаса—колыбель армян. Ереван, 1948.

²⁷ Բ. Բ. Պիոտրովսկի. Հայ ժողովրդի ծագման հարցի շուրջը.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1945, № 6:

շուրջ շորս դարով և հասցվեց մինչև մ. թ. ա. XII դարը²⁸ և մյուս կողմից հիմնավորվեց Հայաստան-Ազգի հնդեվրոպական բնույթը²⁹:

Հայ-արմենների և նրանց ազգակից հնդեվրոպացի ցեղերի առկայությունը և ներթափանցումը բուն Ուրարտուում կարող է սկսված լինել շատ վաղ, առնվազն հայ-արմենական իշխանությունների հիմնադրման օրվանից: Հայկական լեռնաշխարհի արևմուտքից, տարբեր ժամանակներում, տարբեր ուղիներով այդ ցեղերը շարժվել են դեպի արևելք և հաստատվել երկրի տարբեր մասերում:

Ամենայն հավանականությամբ այս շարժումների հիմնական ժամանակաշրջանները համընկնում են ուրարտական պետության հիմնադրմանը նախորդող հարյուրամյակների և նույն այդ պետության գոյության վերջին հարյուրամյակի՝ հատկապես նրա վերջի հետ:

Սկզբնաղբյուրներում (հայկական, ուրարտական, ասորեստանյան, անտիկ) պահպանված տեղագրական, ցեղագրական տվյալները, անձնանունները թույլ են տալիս կազմել հնդեվրոպական տարրի տեղաբաշխման մոտավոր պատկերը Հայկական լեռնաշխարհում: Հայաստանի հարավային սահմանները պաշտպանված էին թրակա-փուլուգիական և արմենական ցեղերով: Արևմտյան և Արևելյան Տիգրիսների մոտակայքում հիշատակվող Իշպիլիբերիա քաղաքը, մուշկերը, մուսխանները և գորգիացիները այս կամ այն կերպ առնչվում են թրակափուլուգիական աշխարհի հետ: Վաղուց հայտնի է նաև, որ Արմեն-Շուպրիայից՝ Աղձնիքի տարածքից արմենական ցեղերը առաջ խաղացին այդ սահմանների երկարությամբ դեպի արևելք և հարավ-արևելք՝ հասնելով մինչև բուն ասորեստանյան տերիտորիան (Ստրաբոն): Վանա լճի ավազանի տեղադրական տվյալները ճիշտ է, որոշ վերապահությամբ, նույնպես կարող են վկայել հայ-արմենական և փուլուգիական էթնիկական առկայության մասին այստեղ (օրինակ՝ Ազիզկազի Ռուսա II-ի արձանագրության տեղեկությունները Վանա լճի հյուսիս-արևմուտքում հաթե, Մուշկի և հալիտու երկրներից բնակչության (այդ թվում պետք է կարծել և հայ-փուլուգիական) վերաբնակեցման մասին, Արմարիլի (?), Այադու (?), Հայոց ձոր, Նարեկ տեղանունները):

Կենտրոնական Հայաստանում Մուշը կապվում է փուլուգիացի մուշկերի հետ, Մուշից արևմուտք հանդիպող Տիտիա անձնանունը՝ փոքրասիական, անգամ թրակա-փուլուգիական աշխարհի հետ, իսկ նրանից արևելք, Բագրևանդի Բագավանում վկայված Մաթան աստվածությունը՝ Հայաստան-խեթական աշխարհի հետ:

Հյուսիս-արևելյան Հայաստանում հանդիպում ենք տեղանունների, անձնանունների ու ցեղանունների (Դիուծինի, աստիուծի, Տրիարե (Թուղթ), Ուգդուրի-էթիուրի և այլն), որոնք մեծ մասամբ առնչվում են թրակափուլուգիական իրականության հետ:

Նման կոնտեքստում հավանական է դառնում հյուսիսում, Հայաստանի և Վրաստանի սահմանում հանդիպող, վրաց ժողովրդի կազմավորման գործում մեծ դեր խաղացած մեսխերի փուլուգիական (մուշկական) հնդեվրոպական ծագումը: Ուրարտական տերության արևմտյան հատված և Մուսանի մարզերից Արարատյան դաշտ տեղափոխված բնակչության թվում կարող էին լինել նաև հայ-արմեններ:

Վերջապես, Հայաստանի արևելքում վկայված, նույն թրակիական տրերների հետ առնչվող Տերիանի տեղանունը և Բալա խեթական տեղանվան հիմքի վրա կազմված բազմաթիվ տեղանունները ամբողջացնում են Հայկական լեռնաշխարհում հայկական հնդեվրոպական իշխանությունների սահմաններից

²⁸ Ս. Տ. Երեմյան. Հայերի ցեղային միությունը Արմեն-Շուպրիա երկրում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 3:

²⁹ Դ. Բ. Զահուկյան. Հայաստանի լեզվի հիննաատկական ծագման վարկածը.— «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1:

դուրս հանդիպող հայ-արմենական և նրանց ցեղակից խմբերի տարածման ոչ լրիվ պատկերը³⁰:

Հնդեվրոպական ցեղերի երևան գալը Հայկական լեռնաշխարհում չի կապվում անպայման սկզբնաղբյուրներում հայկական հնդեվրոպական իշխանությունների առաջին հիշատակությունների հետ: Եթե, օրինակ, Հայաստան-Աղդի հնդեվրոպական միավորը հիշատակվում է մ. թ. ա. XIV դարից սկսած, այդ դեռ չի նշանակում, որ նրա գոյության սկիզբը չէր կարող լինել ավելի վաղ: Կան հնդեվրոպական ալիքակապի կապը, որ հաստատվել է հեթանոսների և հայասերների միջև, որպես հին անատոլիական լեզուների (Գ. Բ. Ջահուկյան), ինչը է տալիս ենթադրելու, որ հայասերները երևան են եկել խեթերի հետ միաժամանակ, առնվազն մ. թ. ա. II հազարամյակի սկզբին, դուրս անդամ I-I հազարամյակի վերջին:

Հնդեվրոպական կարգի որոշ դիտողություններ նույնպես թույլ են տալիս վաղ ժամանակով թվագրել հնդեվրոպական տարրի երևան գալը Հայկական լեռնաշխարհում, մ. թ. ա. III—II հազարամյակների սահմանագծում, եթե, իհարկե, վերջնականապես ապացուցվի, որ այդ ժամանակաշրջանում կամ մի քիչ էլ վաղ Հայաստանի հնագույն մշակույթում հանդես եկող գոնազարդ խեթերների էթնիկական կողմերը Հայկական լեռնաշխարհ մուտք գործած հնդեվրոպացիներն են:

Բայց սա դեռ ամենը չէ:

Հայտնի է, որ վերջերս առաջ քաշված պատմալեզվագիտական նորագույն տեսության համաձայն Հայկական լեռնաշխարհը և նրա հարակից շրջանները համարվում են հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը: Նման մոտեցման դեպքում հայերի հնդեվրոպական նախնիները դեռևս հնագույն ժամանակաշրջանում ապրում էին Հայկական լեռնաշխարհում կամ նրա հարևան տարածքում: Նման տեսությունը անշուշտ հետաքրքիր լինելով հանդերձ, սլահանջում է լուրջ և բաղժանկողմանի քննարկում նախ և առաջ հնդեվրոպաբանների շրջանում, մանավանդ, որ գիտական առաջին արձագանքները այդ տեսության մասին խիստ քննադատական են:

Սրանք հարցեր են, որոնք այս հոդվածի նպատակներից դուրս են մնում:

Արմե-Շուպրիայի պատմությունը մ. թ. ա. VIII—VII դդ., դա Ասորեստանի և Ուրարտուի ոտնձգություններից պաշտպանվելու պատմությունն է: Հինարևելյան տերությունների վերահաս կործանման նախօրեին Արմե-Շուպրիան ակտիվացրեց իր քաղաքականությունը՝ հարելով Առաջավոր Ասիայում հանդես եկած նոր ուժերին և դեմս Մարաստանի և Սոր բաբելոնական տերություն: Եթե ճիշտ է Մովսես Խորենացու հաղորդածը Նինվեի պաշարմանը և անկմանը հայերի մասնակցության մասին, ապա հայ-մարա-նորբաբելոնական դաշինքը մ. թ. ա. 612 թ. նախօրեին՝ իրողություն էր: Ասորեստանի անկումից հետո դաշինքը ստացավ հակաուրարտական բնույթ: Դեպի Ուրարտուի խորքերը կա-

³⁰ Гр. Капанцян. Хайаса—жолыбель армян, с. 128—131, 154—158, 248—251; Г. А. Мелникишвили. К истории древней Грузии. Тбилиси, 1959, с. 108; И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 221; Ս. Տիրացյան. Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ.— «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2, էջ 90—93, 109; նույնի՝ Հայկական առաջին պետական կաղմավորումները.— «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 3, էջ 93, 109—110, 116; Ս. Դ. Պետրոսյան. Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 187 և հտ.: Նույնի՝ Թրակա-կիմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում.— «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 207 և հտ.: նույնի՝ Հին թրակյան էթնիկական տարրերը հնագույն վանանդում.— ՀՍՍՀ ԳԱ «Լրագրի հան. գիտ.», 1977, № 8, էջ 32 և հտ.: Г. А. Мелникишвили. К чтению одного места в летописи урартского царя Аргишти I, с. 174; О. О. Карагезян. Фракции на юго-западе Армянского нагорья.— «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 217 և հտ.:

տարված բարելոնական և մարական արշավանքները, որ վկայված են նորբարելոնական արձանագրություններում, վերջնականապես թուլացրին Ուրարտուն՝ գործողության ազատություն տալով հայերին:

Աստ երևույթին մ. թ. ա. 609—608 թթ. և 590—585 թթ. սրճն ընկած ժամանակահատվածում (դեպի Ուրարտու կատարված արշավանքների տարեթվերից սկսած մինչև Ուրարտուի վերջնական անկումը) տեղի ունեցան հայ-արմենների առավել ինտենսիվ փոխհարձեր՝ շարժվելով դեպի արևելք, դեպի տերության կենտրոնական մարզերը: Ինչպես արդեն նշվեց, Հայոց ձորոց Տուշպավանի մոտ կարող է վկայել հայերի ներթափանցման մասին դեռևս Ուրարտական պետության գոյության պայմաններում: Դժբախտաբար իր հաստատումը չգտավ Ուրարտուի գոյության վերջին տասնամյակներում ուրարտական գահի վրա բարձրացած ժագումով հայ թագավորների մասին հետաքրքիր վարկածը:

Մ. թ. ա. 590 թ. Ուրարտուին փոխարինելու եկած հայկական թագավորությունը նրա քաղաքական ժառանգը հանդիսացավ Հայկական լեռնաշխարհում, որը ամբողջությամբ ընդգրկվեց նրա կազմի մեջ:

НЕИНДООЕВРОПЕЙСКИЕ ПРЕДКИ АРМЯН ХУРРИ-УРАРТЫ И ПРОБЛЕМА УРАРТУ—АРМЕНИЯ

Г. А. ТИРАЦЯН

Резюме

За последние годы, главным образом в неакадемической печати, снова ставится под сомнение не только название *Урарту*, но и существование страны и государства под этим именем. Между тем известно, что слово *Урарту* и его разновидности, встречаются начиная с XIII в. до н. э., и хотя *урарты*—не самоназвание жителей Армянского нагорья, эти обозначения имеют местные корни и уже больше ста лет с успехом применяются в научной литературе.

В языковом, да и в этническом смысле давно доказано, что урартские племена родственны хурритам, их языки образуют отдельную, самостоятельную семью среди языков древней Передней Азии. Поэтому все попытки читать урартские клинописные надписи на другом языке оказались бесперспективными. Изучение лапидарных надписей и надписей на глиняных табличках показывает живой характер их языка, понятного не только верхам, но и вообще грамотной части урартского населения страны. По этой причине всякие сравнения урартского языка с арамейским и греческим по той роли, которую они играли в странах Передней Азии и в самой Армении, лишены научного основания.

Отмеченное ничуть не умаляет того важнейшего значения, которое хурри-урартские племена имели в процессе образования армянского народа. Как показывают факты, хурри-урартский этнический массив целиком растворился в армянской индоевропейской среде, оставив по себе довольно ощутимые следы. Все в большей мере выявляются преемственные связи между Урарту и Арменией. Такие связи удастся проследить в политических задачах, которые стояли перед урартским и древнеармянским государствами, в религиозной сфере, в материальной культуре, в области антропологии и топонимики. Хотя хурри-урартский языковой материал выступает как субстратное явление в армянском языке, он указывает на весомые связи, существовавшие в этой области.